քը թրքական բնակչության համեմատությամբ, թուլացնում էին թրքական բեկերի և մահմեդական հոգևորականության ազդեցությունը և գրգռում էին նրանց հայերի դեմ։ Արհեստական կերպով ցարական պաշտոնեության կողմից բորբոքվող այս անտագոնիզմն Անդրկովկասյան կենտրոնական վարչական ապարատի տապալումից հետո՝ դաշնակների և մուսավաթիստների վարած նեղ ազգային, եսամոլ քաղաքականության հետևանքով՝ վերածվեց կատաղի զինված ընդհարումների և փոխադարձ ոչնչացման։ Բնակչության մեջ տեղի ունեցան տեղաշարժեր, որոնց հետևանքով հայկական տարրն ամփոփվեց նախկին ցարական Զանգեզուրի արևմտյան, իսկ թրքականը՝ արևելյան բաժիններում։ Սովետական իշխանությունը վերջ դրեց այդ սպանդանոցին և ըստ ամենայնի հավատարիմ մնալով իր վարած ազգային քաղաքականությանը՝ բնակչությանը բաժանեց ազգային կազմի հիման վրա՝ ցարական ժամանակվա աշխարհագրականորեն միասնական Զանգեզուրը երկու մասի, անցկացնելով նրանց միջև Հայաստանի և Ադրբեջանի հանրապետական սահման։ Արևմտյան բաժինը մնաց հայկական, իսկ արևելյանը՝ ադրբեջանական հանրապետության սահմաններում։

Աղյուսակ 2

Զանգեզուրի ազգաբնակչությունը XIX դարում

Շրջաններ	Մարդահամարային թվականներ													
	1831			1873				1886				1897			
	Հայեր	Ադրբեջանցիներ	Գումար	Հայեր	Ադրբեջանցիներ	Այլք	Գումար	Հայեր	Ադրբեջանցիներ	Այլք	Գումար	Հայեր	Ադրբեջանցիներ	Այլք	Գումար
Գորիսի	4693	343	5039	17466	941	16	18423	23168	1787	4	24959	24217	1505	160	25882
Կապանի	1872	1740	3612	6703	4080	2	10785	12324	7554	—	19878	14489	11700	128	26317
Մեղրու	1031	1143	2174	3010	2997	4	6011	4213	2611	1585*	8409	5765	3998	103	9866
Սիսիանի	2155	1053	3207	9602	4106	-	13708	13145	7462	465**	21072	14736	9828	623	25187
Գումար	9754	4278	14032	36781	12124	22	48927	52850	19414	2054	74318	59207	27031	1014	87252
Տոկոս	69,6	30,4	100,0	75,2	24,8	—	100,0	71,1	26,1	2,8	100,4	67,8	31,0	1,2	100,0

Ըստ № 2 աղյուսակի հայերը մեծամասնություն են կազմում Գորիսի շրջանում։ Սիսիանում՝ ռուսները ավելի մեծ թվով են ներկայացված, որպես Բորիսովկա գաղութ-գյուղի բնակիչներ։ Ղափանում նրանք առավելապես հանքավայրերի բանվորներ են և երկաթգծի ծառայողներ։

Ղափանի և Գորիսի շրջաններումն էլ տվյալները նշում են կանանց թվի պակասը տղամարդկանց թվի համեմատությամբ թե հայերի և թե ադրբեջանցիների մեջ, մի երևույթ, որը կրկնվում է Հայաստանի ուրիշ շրջաններում ևս։ Միայն Սիսիանում երկու սեռի ներկայացուցիչների թիվը գրեթե համահավասար է կանանց սեռի մի աննշան առավելությամբ։ Կանանց թվի պակասը մանավանդ աչքի է ընկնում ադրբեջանցիների մեջ, որտեղ ամեն մի հազար տղամարդու դիմաց ունենք 892 կին։ Իգական սեռի թվի համեմատական պակասն առհասարակ մի ընդհանուր երևույթ է հար սվ-արևելյան Եվրոպայում, օրինակ՝ Բալկանյան թերակղզու վրա, և նշվում է նաև Առաջավոր Ասիայում։ Այս ընդհանուր երևույթը բացատրվում ոչ թե այն հանգամանքով, իբր թե այդ

* Թաթարներ։

** Ռուսներ։